«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Ուսուցման ժամանակակից մեթոդները և ՏՀՏ-ը՝ որպես օտար լեզուների դասավանդման կարևորագույն գործիքներ

ԱՌԱՐԿԱ՝ *Գերմաներեն լեզու*
ՀԵՂԻՆԱԿ՝ *Էմմա Թորոսյան*
ՂԵԿԱՎԱՐ *Զուլիետա Հակոբյան*

ՄԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Ուսուցման ժամանակակից մեթոդներ 5
Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ) 12
Եզրակացություն 18
Գրականության ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և միջոցներ: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն պայմանավորված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը հաջողությամբ անցել են ժամանակի քննությունը, ավանդաբար կիրառվել ու շարունակելու են կիրառվել: Սակայն հասարակության զարգացման արդի փուլում կրթության առջև դրված նոր խնդիրներն ու հեռանկարային զարգացումները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Ուսուցման պրոցեսը պետք է հետաքրքիր լինի, իսկ նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի, հասանելի մատուցումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը կամա թե ակամա դառնա ուսումնական գործընթացի մասնակից:

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչից պահանջվում է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց իրականացմանն ուղղված հնարների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Ժամանակակից տեխնոլոգիաները փոխում են գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունները: Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելաոճը: Ավելին, տեխնոլոգիաները սովորողներին նոր պահանջներ են ներկայացնում. հիմնական կարողություններից բացի, նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ:

Ներկայումս հանրակրթական դպրոցներում, մասնավորապես օտար լեզուների դասավանդման պրոցեսում, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման խնդիրն ամենաարդիականներից է: Կյանքի տարբեր ոլորտներում

ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների արագ ներգրավումը պահանջում է վերջիններիս վրա հիմնված կրթական համակարգի նոր մոդելի ձևավորում, մշակում: Խոսքը մարդու ստեղծագործական ներուժը բացահայտելու, կարողությունները զարգացնելու, ինքնակատարելագործումն ու պատասխանատվությունը կարևորելու համար անհրաժեշտ պայմաններ ու միջավայր ստեղծելու մասին է:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ

Ուսուցման մեթոդը բարդ և բազմակողմանի հասկացություն է, ինչն առաջին հերթին պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Այն իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա): Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման նպատակը և վերջնարդյունքը: Այսպիսով, կարող ենք ասել, որ ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձնահատուկ դեր:

Յուրաքանչյուր ուսուցիչ դասից առաջ կանգնում է մի քանի կարևոր խնդիրների առաջ.

- ✓ Ինչպե՞ս հաջող պլանավորել դասը
- ✓ Ինչպե՞ս հաջող իրականացնել դասը
- ✓ Ինչպե՞ս կանխատեսել արդյունքները
- ✓ Ինչպե՞ս հասնել նպատակներին
- ✓ Ինչպե՞ս վերլուծել հաջողություններն ու բացթողումները;

Այս խնդիրների իրականացման համաի ուսուցչին անհրաժեշտ է ուսուցման բազմազան մեթոդների լավ իմացություն:

Ի՞նչ է ***մեթոդը***: Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ճանապարհ, ուղի: Գիտական գրականության մեջ մեթոդն ունի բազմաթիվ սահմանումներ:

Սահմանումների բազմազանության և առատության մեջ, այնուաենայնիվ, առկա են որոշակի ընդհանրություններ: Այսպես, համարյա բոլոր սահմանումներում մեթոդը բնութագրվում է որպես նպատակին հասնելու միջոց, գործիք կամ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեություն և այլն: Եթե փորձենք ընդհանրացնել և բնութագրել մեթոդը, ապա կարող ենք ասել, որ այն ուսուցչի ու աշակերտի համագործակցությունն է ուսումնական միջավայրում, նրանց համատեղ գործունեությունն է՝ միտված ուսումնական նպատակների իրականացմանը և հասնելու վերջնարդյունքին:

Ուսուցիչը թեպետ ազատ է մեթոդների ընտրության հարցում, բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել կամ լինել ինքնանպատակ: Այսինքն, բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է, այլ առաջին

հերթին՝ առկա մեթոդական ողջ պաշարի կիրառմամբ հասնել ուսուցման նպատակների իրականացմանը:

Պայմանականորեն ուսուցման մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ ***ավանդական*** և ***նոր*** կամ ***ժամանակակից*** մեթոդներ:

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդերն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

- աշակերտը նյութը սովորում է՝ ինչ-որ բան կատարելով. մասնակցելով որոշակի գործընթացի,
- աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը,
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար,
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցության կարողություններ,
- նյութի իրացման ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը,
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Այսպիսով, մեթոդները կարելի է բաժանել երեք խմբի՝ պասիվ, ակտիվ և ինտերակտիվ:

Մանկավարժության մեջ պասիվ ուսուցման մեթոդները համարվում են ամենաանարդյունավետը և հանգում նրան, որ սովորողները հանդես են գալիս պասիվ ունկնդրի դերում: Պասիվ դասերի օրինակներ՝ դասախոսություն, հարցում, թեստ, փորձարկում և այլն: Որոշ ուսուցիչներ, չնայած պասիվ ուսուցման բոլոր թերություններին, նախընտրում են հենց այս մեթոդը, քանի որ այն հեշտ է պատրաստել ու իրականացնել: Սակայն այս մեթոդը համարվում է քիչ էֆեկտիվ: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի հաղորդումն է:

Արդի մանկավարժության մեջ գլխավոր նպատակն է ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոխարինվի ակտիվ մասնակցի դերով, ինչի շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման նկատմամբ դրական ազդակներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության բացահայտում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Ակտիվ մեթոդները հիմնված են դասավանդող - սովորող համագործակցության վրա, այսինքն դասավանդողը և սովորողը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար սովորողները պետք է մտածեն, ստեղծագործեն: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես դասավանդողի և սովորողի միջև, այնպես էլ իրենց՝ սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցական հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ զարգանում է սովորողի խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ: Սրանք այն մեթոդներն են, որոնց կիրառման դեպքում սովորողի գործունեությունը ձեռք է բերում արդյունավետ. ստեղծագործական, որոնողական բնույթ: Ուսուցման ակտիվ մեթոդներից են դիդակտիկական խաղերը, որոշակի իրադրության վերլուծությունը, պրոբլեմային խնդիրների լուծումը, մտագրոհը, ուսուցումն ըստ քայլաշարի (ալգորիթմ) և այլն:

Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «inter-փոխադարձ», «act-գործել» բառերից:

Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն դասավանդողի, այլև միմյանց հետ:

Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման գաղափարը ուսանողի ուշադրության կրթական և ճանաչողական մտածելակերպի ակտիվացումն է: Ինտերակտիվ ուսուցման էությունը այն է, որ կրթական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ գրեթե բոլոր ուսանողները ներգրավված լինեն ուսուցման գործընթացում, նրանք հնարավորություն ունեն հասկանալ եւ մտածել իրենց գիտելիքների մասին:

Մեկ չինական առակում ասվում է. «Ասա ինձ, եւ ես կմոռանամ, ցույց տուր ինձ, եւ ես կհիշեմ, ներգրավիր ինձ եւ ես կհասկանամ»: Այս խոսքերով արտացոլվում է ինտերակտիվ ուսուցման էությունը: Ինտերակտիվ մեթոդներ օգտագործելիս սովորողը դառնում է լիարժեք մասնակից ուսուցման գործընթացին, իսկ ուսուցիչը պատրաստի գիտելիքներ չի տալիս, բայց խրախուսում է սովորողներին ինքնուրույն որոնել, գտնել: Դասերի ավանդական ձեւերի համեմատությամբ ինտերակտիվ ուսումը փոխում է ուսուցչի եւ ուսանողի փոխհարաբերությունները: Ուսուցչի գործունեությունը զիջում է սովորողի գործունեությանը, եւ ուսուցչի առաջադրանքը դառնում է իրենց նախաձեռնության պայմանների ստեղծումը:

Այսպիսով, ժամանակակից կրթության հիմքում ընկած են հետևյալ մոտեցումները.

1. Զարգացնող ուսուցում
2. Սովորողակենտրոն ուսուցում
3. Հաղորդակցական ուսուցում
4. Կոլեկտիվ ուսուցման համակարգ (CSE)
5. Համատեղ ուսուցում (թիմային, խմբային աշխատանք)
7. Նախագծային ուսուցման մեթոդներ

Զարգացնող ուսուցման տեսությունը ուսումնառության տեսության և կրթության պրակտիկայի ուղղություններից է, որը բովանդակությամբ, մեթոդներով ու կազմակերպման ձևերով ուղղված է սովորողների ֆիզիկական, ճանաչողական և բարոյական ունակությունների զարգացմանը նրանց պոտենցիալ հնարավորությունները և այդ զարգացման օրինաչափությունները օգտագործելու միջոցով:

Սովորողակենտրոն ուսուցման հիմքում ընկած է այն համոզումը, որ ուսուցումը տեղեկատվության պարզ փոխանցում չէ: Այն ընդգծում է սովորողների

ակտիվ մասնակցությունը ուսուցման գործընթացին, սովորողների կողմից տեղեկատվության յուրացումն ու սեփական գիտելիքի կառուցումը, ուսումնառություն բացահայտումների միջոցով: Սովորողին հնարավորություն է ընձեռվում տեղեկա-տվությունը և գաղափարները քննության ենթարկել, վերլուծել, ձևափոխել, խորհել դրանց նշանակության մասին, դիտարկել դրանք հակադիր տեսանկյուններից, հիմնավորումներն ամրապնդելու համար կառուցել դրույթների համակարգ, և այդ կառույցների վրա հենվելով՝ գալ որոշակի դիրքորոշման: Ինչպես նշում է Ջ. Բրուները «...այսօր բավարար չէ երեխաներին բացատրել, թե ինչ անեն, օրակարգում այն հարցն է, թե ինչ են մտածում իրենց արածի մասին և ինչու են դա անում» (Bruner J. 1996):

Արդի ժամանակաշրջանում օտար լեզվի *ուսուցման հաղորդակցական* կոմպետենցիան մնում է առանցքային հասկացություն համարյա բոլոր մեթոդական համակարգերում: Ակնհայտ է, որ հաղորդակցական ունակությունների առավելագույն զարգացումն այն հիմնական, հեռանկարային, բայց և ոչ դյուրին խնդիրն է, որ ծառանում է օտար լեզուների ուսուցիչների առջև: Հաղորդակցման ուսուցումն օտար լեզվի դասավանդման գործնական ուղղվածության գործընթաց է, որի ընթացքում ուսուցման նպատակը (լեզվի ուսուցումը որպես հաղորդակցման միջոց) և նպատակին հասնելու միջոցը (խոսքային գործունեությունը) գործում են համատեղ:

Կոլեկտիվ ուսուցման կառուցվածքային հիմքը յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ փոխազդեցության ձևն է, ինչը հնարավորություն է տալիս ստեղծել համընդհանուր համագործակցության ու փոխօգնության վրա հիմնված ուսուցման գործընթաց: Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրներն իրագործում է մյուսների օգնությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները: Այստեղ արդեն, ի տարբերություն ինտերակտիվ մեթոդների, աշակերտների համագործակցությունը չի սահմանափակվում միայն համատեղ քննարկումներով: Աշակերտների միջև փոխազդեցությունը կազմակերպվում է փոխուսուցման, համատեղ ուսումնասիրություններ, փոխստուգման, փոխվարժանքի և այլ նմանատիպ նպատակներով:

Համատեղ ուսուցում ասելով հասկանում ենք թիմային, խմբային աշխատանք, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելու: Դասավանդողն ինքը պետք է տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի

սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը: Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա

Օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողներին ակտիվացնելու ուղիներից է *նախագծային մեթոդը*, երբ ուսանողն ինքնուրույն պլանավորում, ստեղծում, պաշտպանում է իր նախագիծը, այսինքն՝ ակտիվորեն ներգրավված է հաղորդակցման գործընթացում: Նախագիծը սովորողներին հնարավորություն է տալիս արտահայտելու իրենց սեփական գաղափարները ստեղծագործական մտածված ձևով, որը հարմար է նրանց՝ պատրաստելով կոլաժներ, պաստառներ, հայտարարություններ, հարցազրույցներ և հետազոտություններ անցկացնել, անհրաժեշտ մեկնաբանություններով մոդելներ ցուցադրել, նկարազարդումներով տարբեր վայրեր այցելելու պլաններ կազմել:

Նախագծի մեթոդաբանության կիրառումը թույլ է տալիս ստեղծել հետազոտական, ստեղծագործական մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր ուսանող ներգրավված է ակտիվ ճանաչողական գործընթացում՝ հիմնված համագործակցության մեթոդաբանության վրա: Այն օգնում է զարգացնել լեզվական և ինտելեկտուալ կարողությունները, լեզու սովորելու կայուն հետաքրքրությունը և ինքնակրթության անհրաժեշտությունը: Ժամանակակից դպրոցում նախագծային մեթոդի կիրառումը օտար լեզուների ուսումնասիրությունը խթանելու ամենահզոր խթաններից է, ամենաստեղծագործական գործունեությունը, քանի որ բոլոր սովորողները ներգրավված են նախագծի վրա՝ անկախ իրենց կարողություններից և լեզվի մակարդակից:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՒ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ)

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) այն թվային տեխնոլոգիաների լայն շրջանակն է, որն օգտագործվում է տեղեկատվության ստեղծման, փոխանցման և տարածման և ծառայություններ մատուցելու համար (համակարգչային սարքավորումներ, ծրագրային ապահովում, հեռախոսագծեր, բջջային կապ, էլ. փոստ, բջջային և արբանյակային տեխնոլոգիաներ, անլար և կաբելային կապի ցանցեր, մուլտիմեդիա գործիքներ, ինչպես նաև ինտերնետ):

Արդի ժամանակներում ավելի ու ավելի մեծ պահանջներ են ներկայացվում օտար լեզվի գործնական գիտելիքների ուսուցման առօրյա հաղորդակցության և մասնագիտական ոլորտում: Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն: Մշակվում են հանրակրթության արդյունավետության բարձրացման ուղիներ, մեծ միջոցներ են ներդրվում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների մշակման ու ներդրման համար, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը բացահայտում է համակարգչի՝ որպես ուսուցման միջոցի հսկայական ներուժը:

Ժամանակակից ուսուցիչը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) հաստատուն կերպով մուտք են գործել մեր կյանք: Տեղեկատվական արդի տեխնոլոգիաների օգտագործումը ընդլայնում է ուսումնական գործընթացի շրջանակը, նպաստում է ուսումնական գործընթացում սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, սովորողների ինտելեկտուալ, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, նրանց կողմից ինքնուրույն նոր գիտելիքներ ձեռք բերելու և ստեղծագործելու կարողությանը, հետագայում դրանց հաջող ինքնահիրացման պայմանները:

Այսպիսով, վստահորեն կարող ենք ասել, որ օտար լեզուների ուսուցիչները պետք է տիրապետեն ՏՀՏ գործիքների կիրառման մեթոդաբանությանը սովորողա-կենտրոն կրթական գործընթաց կազմակերպելու համար:

Ուսումնական գործընթացում առավել հաճախ օգտագործվող ՏՀՏ գործիքները ներառում են.

- ✓ էլեկտրոնային դասագրքեր և ձեռնարկներ,
- ✓ էլեկտրոնային հանրագիտարաններ և տեղեկատու գրքեր,
- ✓ Ինտերնետային կրթական ռեսուրսներ,
- ✓ DVD և CD-ներ նկարներով և նկարազարդումներով,
- ✓ վիդեո և աուդիո սարքավորումներ,

- ✓ ինտերակտիվ գրատախտակ,
- ✓ մուլտիմեդիա նախագծի օգնությամբ ստեղծված սլայդներ, պրեզենտացիաներ Microsoft ծրագիր Power Point-ի միջոցով:
- ✓ Quizizz, Google Forms, Learning apps, Kahoot և այլ առցանց գործիքներ:
- ✓ հետազոտական աշխատանքներ և նախագծեր և այլն:

Նպատակն է՝

- ✓ Օտար լեզվի դասավանդման արդյունավետության բարձրացում:
- ✓ Ուսանողների մոտ օտար լեզու սովորելու մոտիվացիայի խթանում

Առաջադրանքներ՝

- ✓ Ձևավորել լեզվական հմտություններ:
- ✓ Ստեղծել հաղորդակցական իրավիճակներ.
- ✓ Իրականացնել անհատական մոտեցում և ակտիվացնել սովորողի ինքնուրույն աշխատանքը.
- ✓ Զարգացնել ուսանողների ստեղծագործական ունակությունները:
- ✓ Զարգացնել տարբեր տեսակի հաղորդակցման հմտություններ:

ՏՀՏ-ն հնարավորություն է տալիս դասը դարձնել ժամանակակից (տեխնիկական միջոցների կիրառման առումով), դասը մոտեցնել ժամանակակից երեխայի աշխարհայացքին, քանի որ նա ավելի շատ նայում և լսում է, քան կարդում և խոսում. նախընտրում է օգտագործել տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված տեղեկատվությունը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավոր են դարձնում արագ ստուգել ինքներս մեզ և պարզել մեր աշխատանքի արդյունքը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն արդյունավետ է ուսումնական գործընթացի բոլոր փուլերում՝ կրթական տեղեկատվության ներկայացման, ուսումնական նյութի յուրացման, ձեռք բերված գիտելիքների և հմտությունների կրկնության և համախմբման, միջանկյալ և վերջնական արդյունքի ստուգման և վերահսկման փուլերում:

Օտար լեզվի ուսուցումը ակտիվ ու բարդ գործընթաց է, որի նպատակն է ձևավորել տարբեր լեզուների տիրապետող անձ, որն ունակ է հաղորդակցվել և գործել ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում:

Հաղորդակցական մոտեցումը հիմնված է այն պնդման վրա, որ օտար լեզվին հաջողությամբ տիրապետելու համար սովորողները պետք է իմանան ոչ միայն լեզվական ձևերը (քերականություն, բառապաշար, արտասանություն), այլև պատկերացում ունենան, թե ինչպես օգտագործել դրանք:

Ուսումնական նախագծերի վրա աշխատելու ընթացքում սովորողները դիմում են տարբեր տեղեկատվական ռեսուրսների՝ էլեկտրոնային հանրագիտարանների, մուլտիմեդիա ծրագրերի, ինտերնետային որոնման համակարգերի: Ստացված արդյունքները խմբագրելու, մշակելու և ներկայացնելու համար ուսանողները աշխատում են տեքստային և գրաֆիկական խմբագրիչների հետ, հաճախ կատարում են զեկույցներ կատարված աշխատանքի վերաբերյալ՝ օգտագործելով շնորհանդեսներ, ֆոտոսլայդներ կամ տեսանյութեր: Նման նախագծերին մասնակցելը շատ կարևոր է սովորողների համար, քանի որ նրանք ձեռք են բերում անհրաժեշտ հմտություններ ինքնուրույն աշխատանք և հետազոտական գործունեություն կազմակերպելու համար:

Դիտարկենք լեզվի դիդակտիկ առաջադրանքների հիմնական տեսակները, որոնք կարող են լուծվել ՏՀՏ-ի օգնությամբ, այսինքն՝ համակարգչային ուսուցման գործիքների օգտագործման լեզվամեթոդական հնարավորությունները լեզվի ասպեկտները յուրացնելու, տարբեր տեսակի խոսքի գործունեության մեջ հմտություններ և կարողություններ զարգացնելու համար.

1. Հնչյունաբանություն դասավանդելիս

ՏՀՏ-ի օգնությամբ հաճախ օգտագործվում է արտասանության վիզուալիզա-ցիայի տեխնիկան: Մուլտիմեդիա հնարավորությունները թույլ են տալիս լսել խոսքը թիրախային լեզվով՝ այն հարմարեցնելով ձեր ընկալման մակարդակին, իսկ ձայնի արագության վերահսկումը թույլ է տալիս արտահայտությունները բաժանել առանձին բառերի, մինչդեռ համեմատում եք բառերի արտասանությունն ու ուղղագրությունը: Համակարգիչը առաջարկում է բառերի ցանկ թարգմանության և հնչյունական պրակտիկայի համար: Հնարավոր է ձայնագրել սովորողի ասված խոսքը կամ արտահայտությունը՝ վերահսկողության, ինքնատիրապետման և ուղղման նպատակով:

2. Քերականություն դասավանդելիս.

ՏՀՏ-ի կիրառումը քերականության դասին հնարավոր է գրեթե ցանկացած թեմա ուսումնասիրելիս: Ճիշտ տեղակայման, լավ գունային ձևավորման, դիագրամների և աղյուսակների կիրառմամբ, ձայնային ուղեկցությամբ (օրինակների արտասանու-թյուն օտար լեզվով) նյութը դպրոցականների կողմից ավելի հեշտ և արագ կընկալվի, քանի որ ներգրավված կլինեն ընկալիչների մեծ մասը: Դասին անցկաց-ռած ժամանակը նույնպես քիչ կլինի՝ նյութը գրատախտակին գրելու կարիք չի լինի:

Իսկ ՏՀՏ-ի օգնությամբ ավելի հետաքրքիր է վերահսկել թեստային ծրագրերի հիման վրա քերականական հմտությունների ձևավորման մակարդակը և տրամադրել

տեղեկատու և տեղեկատվական աջակցություն (ավտոմատացված քերականական հղումներ, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում քերականական սխալների հայտնաբերման համակարգեր):

3. Բառապաշար դասավանդելիս.

Տեսողական հստակություն օգտագործող թեստային և խաղային համակարգչային ծրագրերի հիման վրա՝ տրամադրելով տեղեկանք և տեղեկատվական աջակցություն (ավտոմատ բառարաններ, հոմանիշներ և հականիշներ ընտրելու ծրագրեր), աշխատանքի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ բացերը լրացնելու վարժություններ, վարժություններ խաչբառերի տեսքով, որտեղ բառ գրելիս սխալ տառը ընդգծվում է ոչ թե սև, այլ մոխրագույն կամ կարմիր գույնով, վարժություններ՝ նախադասություն կազմող խաղի տեսքով, «Գտիր սխալը» վարժություններ, որոնցում առաջարկվում է ուղղել որոշակի բառ՝ տվյալ իրավիճակին համապատասխան և այլն:

4. Կարդալ սովորեցնելիս.

ՏՀՏ-ն թույլ է տալիս բարելավել ընթերցանության հմտությունները այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են՝ ընկալման դաշտի և ներկայացման տեմպի փոփոխություն, տեքստի գտնվելու վայրի փոփոխություն և այլն, ընկալունակ բառապաշարային և քերականական ընթերցանության հմտությունների ամրապնդում, տեքստից տարբեր տեսակի իմաստային տեղեկատվության (հիմնական, երկրորդական, պարզաբանող և այլն) հանելու հմտությունների տիրապետում, տեքստի վերլուծության տարբեր տեսակների ուսուցում, լեզվական դժվարությունները ինքնուրույն հաղթահարելու ունակության ձևավորում (ավտոմատ բառարանների, էլեկտրոնային հանրագիտարանների օգտագործմամբ) և այլն:

5. Լսել սովորեցնելիս.

Օրինակ՝ հնչյունական լսելու հմտությունների ձևավորում, լսած տեքստի ճիշտ ընկալման վերահսկում:

6. Խոսք սովորեցնելիս.

Օրինակ՝ ձայնային խոսքի հմտությունների ձևավորում, հաղորդակցության կազմակերպում զույգերով և փոքր խմբերով՝ օգտագործելով սիմուլյացիոն ծրագրերի վրա հիմնված դերային խաղեր:

7. Թարգմանել սովորելիս.

Օրինակ՝ թարգմանության բառապաշարային և քերականական հմտությունների ձևավորում, թարգմանության ճշգրտության վերահսկում; տեքստային խմբագրիչների և մեքենայական թարգմանության համակարգերի

միջոցով թարգմանական տեքստերը խմբագրելու ունակության տիրապետում; հղումների և տեղեկատվական աջակցության ապահովում (ավտոմատ բառարանների, բառարանների, հականիշների և հոմանիշների ընտրության համակարգերի օգտագործում):

Այսպիսով, ՏՀՏ-ի ներդրումն օգնում է խնայել ժամանակը և դարձնել աշխատանքը ավելի արդյունավետ, փնտրել տեղեկատվություն, լուծել ավելի շատ խնդիրներ (և նվազեցնել տնային աշխատանքը), վերլուծել արդյունքները, օգնել զարգացնել ուսանողների հետաքրքրությունը ուսումնասիրվող առարկայի նկատմամբ, խթանել ճանաչողական և ստեղծագործական գործունեություն և ուսանողների անկախություն, հաղորդակցման հմտությունների ձևավորում, գիտելիքների օբյեկտիվ վերահսկողության ապահովում, բարձրացնել ուսանողների կողմից նյութի յուրացման որակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության ու կիրառության կարողությունը: Հասարակության զարգացման ներկա փուլում կրթության առջև դրված նոր խնդիրները պահանջում են ուսուցման գործընթացում նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Անվիճելի է, որ ժամանակակից դպրոցում համակարգիչը չի լուծում բոլոր խնդիրները, այն մնում է միայն ուսուցման բազմաֆունկցիոնալ տեխնիկական միջոց: Ոչ պակաս կարևոր են ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները և նորամուծությունները ուսումնական գործընթացում, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն յուրաքանչյուր ուսանողի մեջ «ներդնել» գիտելիքների որոշակի պաշար, այլև, առաջին հերթին, պայմաններ ստեղծել ուսանողների ճանաչողական գործունեության դրսևորման համար: Բայց տեղեկատվական տեխնոլոգիաները, ճիշտ ընտրված (կամ մշակված) դասավանդման տեխնոլոգիաների հետ համատեղ, ստեղծում են ուսուցման և դաստիարակության որակի, փոփոխականության, տարբերակման և անհատականացման անհրաժեշտ մակարդակ:

Լեզուն՝ լինի մայրենի, թե օտար, նախ և առաջ հանդիսանում է հաղորդակցման միջոց: Օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակն է հաղորդակցական օտար լեզվի իմացության ձևավորում, որն անհրաժեշտ է ժամանակակից բազմամշակութային աշխարհում հաջող սոցիալականացման և ինքնաիրացման համար: Այս նպատակին կարելի է հասնել նոր կրթական տեխնոլոգիաների ներդրման միջոցով՝ որպես ուսման մոտիվացիայի և ուսումնառության արդյունքների բարձրացման գործիք՝ զարգացնելով ուսանողների ստեղծագործական կարողությունները օտար լեզուների դասավանդման ընթացքում: Հաղորդակցման տեխնոլոգիաները նախատեսված են սովորեցնելու ազատ շրջագայել օտարալեզու միջավայրում և կարողանալ համարժեք արձագանքել տարբեր իրավիճակներում, սովորողների մոտ մեծ հետաքրքրություն ձևավոևել օտար լեզու սովորելու հարցում:

Օտար լեզվի դասերին ՏՀՏ ուսուցումը արդյունավետ մանկավարժական գործիք է օտարալեզու մշակույթը ուսումնասիրելու և հաղորդակցման հմտությունները զարգացնելու համար: Տեխնոլոգիաները ոչ միայն ապահովում են

ուսումնական ծրագրի ավելի հետաքրքիր բովանդակություն, այլև թույլ են տալիս ավելի հուսալի գնահատել ուսանողների գիտելիքները, բացահայտել նրանց պատրաստման թույլ կողմերը և որոշել ուսուցիչների համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները նրանց փոխանցելու լավագույն տարբերակները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատչյան – Եր.: Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020. - 74 էջ

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, Աջամօղլյան Արմեն, Եղիազարյան Կարինե

3. «Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում». նոր ձեռնարկ ուսուցիչների և ծնողների համար / Աիդա Թոփուզյան, Զուլիետա Գյուլամիրյան, Սամվել Ասատրյան, Երևան 2018/

4. ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԱՐԴԻ ԴՊՐՈՑՈՒՄ / ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՆՈՐԻԿԻ, ՍԵՂՄԱԳԻՐ, ԵՐԵՎԱՆ 2014/

5. Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը անգլերենում. ՏՀՏ-ի օգտագործումը անգլերենի դասերին Եֆրեմով Անատոլի Անատոլիևիչ SS անգլերենի դասերում Քաղաքային ուսումնական հաստատություն «OOSH s.Kuvyka» - շնորհանդես. Առողջապահական տեխնոլոգիաներ՝ օգտագործելով ՏՀՏ

6. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ / Կուբանյան Ա., Երևանի պետական համալսարան/

7. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ / Կարո ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Նելլի ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, Երևանի պետական համալսարան/

Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը

8. https://02stroy.ru/hy/accessories-for-ladders/k-aktivnym-i-interaktivnym-metodam-obucheniya-otnosyatsya.html

9. https://multiurok.ru/files/met-od-met-od-met-od.html

10. http://gspi.am/media/pdf/a2149c61287b1224c973cdd4036899cb.pdf

11. https://monster-evo.ru/hy/belinskijj/chto-takoe-ikt-v-obrazovanii-vidy-sovremennyh-informacionno-kommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/